



ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 08 » « օգոստոսի » 2019 թ. № 258-ՂԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 22-րդ հոդվածով, կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 814-Ն որոշման 10-րդ և 11-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Նշանակել ծառայողական քննություն նախարարության բնապահպանական ռազմավարական ծրագրերի ու մոնիթորինգի վարչության պետ Լուսինե Ավետիսյանի կողմից 2020-2022 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կազմման աշխատանքները թերի կազմակերպելու դեպքով:

Ծառայողական քննության ընթացքում պարզաբանման ենթակա հարցն է՝

1) նախարարի մոտ 2019 թվականի ապրիլի 15-ին և ապրիլի 29-ին կայացած գործակարգավարական խորհրդակցություններին տրված հանձնարարականները սահմանված ժամկետում և թերություններով ներկայացնելու պատճառները:

2. Ծառայողական քննության վարող նշանակել գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Վ. Զիլավյանին:

3. Ծառայողական քննությունը նշանակվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրը:

4. Ծառայողական քննությունն անցկացվում է 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ սույն հրամանը ստորագրելու պահից:

5. Ծառայողական քննությունն անցկացնել հանգամանքների ստուգմամբ, համադրմամբ, պարզաբանմամբ և արդյունքների հիման վրա սահմանված ժամկետներում կազմել և ներկայացնել եզրակացություն:

ՆԱԽԱՐԱՐ

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«08» օգոստոսի 2019 թ.
ք. Երևան